

ՍԱՄԿԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական
քաղաքականության վարչության տնտեսագետ,
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հոդվածում քննարկվել են տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնախնդիրները: Հատկապես կարևորվել են դրանց լուծման արդիական մոտեցումները: Անդրադարձ է կատարվել տնտեսական աճի և սոցիալական ցուցանիշների միջև փոխկապվածություններին: Հեղինակը հարում է այն հիմնարար տեսակետին, որ տնտեսական աճը կնպաստի սոցիալ-տնտեսական զարգացմանը, եթե ուղեկցվի աշխատատեղերի ստեղծմամբ, անհավասարության բարձր մակարդակի կրճատմամբ, աղքատության հաղթահարմամբ, կենսապայմանների բարելավմամբ և այլն:

Հիմնաբառեր. տնտեսական զարգացում, մարդկային զարգացում, տնտեսական աճ, աղքատություն, անհավասարություն, կյանքի սպասվող տևողություն

JEL: A19, O10, O49, P27, P29

Տնտեսական զարգացման վերջնանպատակը մարդկային զարգացումն է, հետևաբար՝ այն առավելապես ուղղված կլինի իր նպատակի իրագործմանը, երբ տնտեսական ցուցանիշների բարելավումն ուղեկցվի սոցիալական խնդիրների հաղթահարմամբ: Սոցիալական ոլորտն ունի առաջնային կարևորություն, ինչի մասին ևս մեկ անգամ վկայում է այն, որ 2015 թ. տնտեսագիտության Նոբելյան մրցանակը շնորհվեց Ա. Դիթոնին՝ աղքատությանը, սպառմանը, բարեկեցությանը վերաբերող հետազոտությունների համար¹: Աձող

¹ Տե՛ս **Deaton A.**, Prize Lecture: Measuring and Understanding Behavior, Welfare, and Poverty, available at: http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.ht. **Deaton A.**, The Great Escape: Health, Wealth, and the Origins of Inequality, Princeton University Press, 2013:

սոցիալական խնդիրները գտնվում են ոչ միայն տնտեսագետների, սոցիոլոգների, քաղաքական գործիչների, այլև մյուս բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Այսպես՝ Հռոմի պապ Ֆրանցիսկոսն իր ուղերձում (Encyclical Letter) անդրադարձավ աղքատության, շրջակա միջավայրի աղտոտման, միգրացիայի և այլ հարցերի²:

Ջարգացման հայեցակարգում տնտեսական ու սոցիալական ոլորտները փոխկապված են, և հաճախ դժվար է լինում դրանց տարբերակումը: Այսպես՝ անհավասարության կրճատումը, աղքատության հաղթահարումը, զբաղվածության ապահովումը կարելի է դիտարկել ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական տեսանկյունից: Տնտեսական զարգացման միջոցով նպաստավոր միջավայր է ստեղծվում սոցիալական խնդիրների լուծման համար: Օրինակ՝ ներառական շուկաների (inclusive markets) ձևավորման միջոցով առաջանում են գործազրկության կրճատման և աղքատության հաղթահարման պայմաններ³: Իր հերթին սոցիալական զարգացումը նպաստում է տնտեսական առաջընթացին. խտրականության վերացումը, արդարության և վստահության մթնոլորտի ստեղծումը տնտեսական իրավիճակի կայունացման, արդյունավետության և արտադրողականության բարձրացման կարևոր միջոցներից են:

Երկար տարիներ որպես տնտեսական զարգացման չափորոշիչ ընդունվել է մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ն: Սակայն այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են Գ. Մյուրդալը, Ա. Սենը, Ջ. Ստիգլիցը և մյուսները, առաջադրեցին այն տեսակետը, որ զարգացումն ու բարեկեցությունը բազմաբովանդակ երևույթներ են, և հնարավոր չէ միայն աճով բացատրել դրանք: Մյուրդալը զարգացումը կապեց ինստիտուցիոնալ միջավայրի, արտաքին տնտեսական հարաբերությունների, ժողովրդավարության հարցերի և այլնի հետ⁴: Ա. Սենը այն դիտարկեց որպես ազատության ընդլայնման, այլ ոչ թե պարզապես եկամտի աճի գործընթաց⁵:

Ջ. Ստիգլիցի կարծիքով՝ ՀՆԱ-ն ամբողջությամբ չի կարող բնութագրել կենսապայմանները: Այսպես՝ առողջապահության ոլորտում անարդյունավետության հետևանքով ծախսերի ավելացումը նպաստում է ՀՆԱ աճին, սակայն դրական ազդեցություն չի ունենում բնակչության կյանքի որակի բարելավման առումով: ՀՆԱ-ն հաշվարկելիս հաշվի չի առնվում նաև դրա ստեղծման ժամանակ շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը հասցված վնասի չափը: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճը կարող է ուղեկցվել բնակչության առողջական վիճակի վատթարացմամբ, եթե դրա հետևանքով ավելանում է շրջակա միջավայրի աղտոտումը: Այսպես՝ հանքարդյունաբերության ոլորտում արդյունահանման ծավալների աճը նպաստում է տնտեսական ցուցանիշների բարելավմանը (տնտեսական աճ, հարկային մուտքերի ավելացում, գործազրկության նակարդակի կրճատում), սակայն համա-

² Տե՛ս **Encyclical Letter Laudato Si՞ Of The Holy Father Francis** On Care For Our Common Home, available at: http://w2.vatican.va/content/francesco/en/encyclicals/documents/papa-francesco_20150524_enciclica-laudato-si.html

³ Տե՛ս **Acemoglu D., Robinson J.**, Why Nations Fail, The Origins of Power, Prosperity, and Poverty, Crown Business, New York, էջ 77:

⁴ Տե՛ս **Myrdal G.**, Prize lecture: The Equality Issue In World Development, available at: http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html
Myrdal G., Asian Drama: An Inquiry Into the Poverty of Nations, Twentieth Century Fund, New York, 1968, 3Vols:

⁵ Տե՛ս **Sen A.**, Development as Freedom, Oxford University Press, 1999, See particularly, chapter 1:

պատասխան միջոցառումների բացակայության պարագայում դա էական վնաս է հասցնում բնակչության առողջությանը: Եթե ՀՆԱ հաշվարկի մեջ ներառվեն շրջակա միջավայրին և բնակչության առողջությանը հասցված վնասները, ապա դրա աճը կարող է նվազել: Հետևաբար՝ Ջ. Ստիգլիցն առաջարկում է կիրառել «կանաչ ՀՆԱ» գաղափարը⁶:

Մարդկային զարգացման և տնտեսական աճի փոխազդեցությանն անդրադարձել է նաև Գ. Ռանիսը՝ նշելով դրա վրա ազդող գործոնները⁷: Այս խնդիրները գտնվում են նաև հայազգի տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Այսպես՝ Հ. Աղաջանյանի կարծիքով՝ տնտեսական զարգացումը պետք է հանգեցնել միայն ՀՆԱ հավելաձին: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև տնտեսական աճի որակին⁸: Տնտեսական աճը կնպաստի սոցիալ-տնտեսական զարգացմանը, եթե ուղեկցվի աշխատատեղերի ստեղծմամբ, անհավասարության բարձր մակարդակի կրճատմամբ, աղքատության հաղթահարմամբ, որակյալ կրթության, առողջապահական ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացմամբ, կենսապայմանների բարելավմամբ և այլն:

Աղքատության հաղթահարման սոցիալ-տնտեսական տեսանկյունները

Քանի որ անհավասարության բարձր մակարդակն աղքատության և՛ պատճառն է, և՛ հետևանքը, նախ կանդիդատներն այդ հարցին: Ջարգացման հայեցակարգում առանձնակի կարևորություն է ներկայացնում անհավասարության խնդիրը: Հետազոտությունները վկայում են, որ վերջինն ազդում է անգամ կյանքի սպասվող տևողության վրա⁹:

Այսօր առավելապես նկատելի է այն երևույթը, որ հաճախ խզվում է կապը տնտեսական աճի ապահովման գործում ներդրված ջանքերի և դրա արդյունքների բաշխման միջև: Տնտեսական աճի «պտուղները» չեն կարող համաչափ բաշխվել, որովհետև տարբեր է հասարակության առանձին անդամների կողմից դրանց ստեղծման գործում մասնակցության աստիճանը: Սակայն աճի պտուղները պետք է հասանելի լինեն հասարակության յուրաքանչյուր անդամին՝ թեկուզև տարբեր համամասնություններով:

Այն դեպքում, երբ տնտեսական աճն ուղեկցվում է անհավասարության և աղքատության մակարդակի խորացմամբ, դա չի կարող համարվել տնտեսական զարգացում: Տնտեսական աճը հասարակության անդամների համար պետք է վերածվի հնարավորությունների, նպաստի կյանքի որակի բարելավմանը և բարեկեցության մակարդակի բարձրացմանը: Պատահական չէ, որ մարդկային զարգացման համաթիվը, որը կազմված է եկամտի, առողջության և կրթության մակարդակը բնութագրող բաղադրիչներից, ճշգրտվում է անհավասարության մակարդակն արտահայտող ցուցանիշներով¹⁰:

⁶ Տե՛ս **Stiglitz J.**, The Price of Inequality. ALLEN LANE an imprint of PENGUIN BOOKS, էջ 182–187:

⁷ Տե՛ս **Ranis G.**, Human Development and Economic Growth, Economic Growth Center, Center Discussion paper No 87, Yale university, May 2004, available at: <http://ssrn.com/abstract=551662>


⁸ Տե՛ս **Հ. Աղաջանյան**, Տնտեսական աճի որակի հարցի շուրջ: Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 2013 թ., N 4, էջ 29–37:

⁹ Տե՛ս **Stiglitz J.**, When Inequality Kills, available at: <http://www.project-syndicate.org/commentary/lower-life-expectancy-white-americans-by-joseph-e--stiglitz-2015-12?barrier=true>

¹⁰ **UNDP**, Human Development Reports, Inequality-adjusted Human Development Index, available at: <http://hdr.undp.org/en/composite/HDI>

Հետազոտությունները ցույց են տալիս, որ անհավասարության բարձր մակարդակի կրճատումն, իր հերթին, աղքատության հաղթահարման, տնտեսական աճի ապահովման, աշխատանքի արտադրողականության և տնտեսական արդյունավետության բարձրացման գործոններից է: Եթե մինչև վերջերս տնտեսագիտության մեջ տիրապետող էր այն կարծիքը, թե հավասարության բարձր մակարդակ ունենալու համար պետք է հրաժարվել տնտեսական աճից, ապա արդեն գիտակցվում է, որ և՛ հավասարության, և՛ տնտեսական աճի միաժամանակյա զոյությունը հնարավոր է¹¹:

Հայաստանում Զինիի գործակիցը 2010–2015 թթ. աճել է՝ 0.362-ից հասնելով 0.374-ի¹²: Հետազոտության նպատակով դիտարկված տարիներին ամենահարուստ 10%-ի բաժինը դրամական եկամուտներում 13–16 անգամ գերազանցել է ամենաաղքատ 10%-ի բաժինը: Տվյալները ցույց են տալիս, որ եկամտային անհավասարությունն աստիճանաբար աճում է (գծապատկեր 1):




Գծապատկեր 1. Բնակչության եկամուտների բաշխումն ըստ դեցիլային խմբերի 2007–2015 թթ. (%) ¹³

Անհավասարության բարձր մակարդակը նկատելի է նաև քվինտիլային խմբերում (գծապատկեր 2): Դիտարկված ժամանակահատվածում աղքատ և միջին խավի դրամական եկամտի բաժինը ոչ միայն էապես չի բարելավվել, այլև կրճատվել է: Անհավասարության խորացման պատճառներից են քաղաքական ռենտայի առկայությունը, անհավասարությունը մարդկային կապիտալում, ինստիտուցիոնալ միջավայրը և այլն:

¹¹ Տե՛ս **Stiglitz J.**, Causes and consequences of growing inequality and what can be done about it, The fourth annual Oxford Fulbright distinguished lecture on international relations, available at <https://www.youtube.com/watch?v=TbvF05EXEVk#t=1329>


¹² Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2016 թ., էջ 103:

¹³ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2011 թ., էջ 109 և 2016 թ., էջ 105:



Չճապատկեր 2. Բնակչության եկամուտների բաշխումն ըստ քվինտիլային խմբերի 2007–2015 թթ. (%) ¹⁴


Քանի որ սպառումը կախված է եկամտից, ուստի եկամտի անհավասար բաշխումը հանգեցնում է սպառման անհավասարությանը: Հայաստանում եկամտային և սպառման անհավասարության միտումները համընկնում են (տե՛ս գծապատկերներ 1 և 3): Առաջնահերթություն է հատկապես աղքատ բնակչության սպառման մակարդակի բարձրացումը: Դա բացատրվում է նրանով, որ նվազագույն սպառողական զամբյուղի անհասանելիությունն աղքատության բնութագրիչներից է: Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը: Դրա բաղկացուցիչներից են սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը, ինչպես նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը ¹⁵:



Չճապատկեր 3. Բնակչության սպառողական ծախսերի բաշխումն ըստ դեցիլային խմբերի 2007–2015 թթ. (%) ¹⁶

¹⁴ Տե՛ս նույն տեղը, համապատասխանաբար՝ էջ 107 և 103:
¹⁵ Աղբյուրը՝ «Վաճառքային վիճակագրական ծառայություն, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2016 թ., էջ 37:
¹⁶ Աղբյուրը՝ «Վաճառքային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2011 թ., էջ 109 և 2016 թ., էջ 105:

ՀՀ-ում ցածր կենսամակարդակն արտահայտվում է նաև նրանով, որ սպառողական ծախսերի գրեթե կեսը (վերջին տարիներին նկատվել է մասնաբաժնի փոքրացում) կազմում են սննդամթերքի վրա կատարված ծախսերը (գծապատկեր 4): Սա վկայում է այն մասին, որ ՀՀ բնակիչների զգալի մասի եկամուտները փոքր են, իսկ սպառողական ծախսերն առավելապես ուղղված են կենսական նվազագույնի պահպանմանը: Սրան զուգահեռ, Հայաստանում ևս նկատվում է ցուցադրական սպառման առկայությունը, որն իրականացվում է նույնիսկ ցածր եկամուտներ ունեցողների շրջանում (երբեմն պարտքի հաշվին):



Պատկեր 4. *Տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքը 2007–2015 թթ. (%)*¹⁷

Աղքատության հաղթահարումն այն ուղիներից է, որով տնտեսական աճը նպաստում է մարդկային զարգացմանը: Աղքատության կրճատումը պահանջում է այնպիսի տնտեսական աճ, որը բնակչությանը հնարավորություն կտա օգտվելու այդ աճի պտուղներից: Խոսքը ներառական աճի մասին է, որը արտասահմանյան գրականության մեջ հայտնի է «inclusive growth» տերմինով: Կիրառվում է նաև «աճ աղքատների օգտին» տերմինը (pro-poor growth): Սակայն եթե վերջինը կենտրոնանում է հատկապես աղքատների բարեկեցության վրա, ներառական աճի պարագայում որպես հիմք են ընդունվում բնակչության մեծամասնության (աղքատներ ու միջին խավ) հնարավորությունները:


Ներառական տնտեսական աճը երկարաժամկետ ուղղվածություն ունի, քանի որ կենտրոնանում է ոչ թե եկամուտների վերաբաշխման, այլ արտադրողական զբաղվածությունն ապահովելու վրա: Կարճաժամկետում կառավարությունը կարող է եկամուտների վերաբաշխման ճանապարհով մեղմել աղքատության հիմնախնդիրը, սակայն երկարաժամկետում դա չի կարող դառնալ հարցի լուծման միակ ուղին¹⁸:

¹⁷ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2008–2016 թթ., համապատասխանաբար՝ էջ 80, 96, 123, 128, 132, 125, 113, 116, 124:

¹⁸ Տե՛ս **Ianchovichina E., Lundstrom S.**, with input from **Garrido L.**, What is inclusive growth?, February 10, 2009. The note was requested by donors supporting the Diagnostic Facility for Shared Growth:

Իր հերթին, աղքատության հաղթահարումը նպաստում է տնտեսական աճին: Դա բացատրվում է նրանով, որ ցածր եկամուտներ ունեցող մարդկանց սպառման սահմանային հակումը համեմատաբար մեծ է: Հետևաբար՝ նրանց կենսամակարդակի բարձրացումը կմեծացնի ամբողջական պահանջարկը: Առաջնահերթություն է սոցիալապես խոցելի խմբերի հիմնական կարիքների բավարարումը (դա արտասահմանյան գրականության մեջ հայտնի է «Basic needs approach» անվամբ): Սակայն անհրաժեշտ է ոչ միայն աղքատությունը հաղթահարել, այլև նպաստավոր պայմաններ ստեղծել բարեկեցության առավել բարձր մակարդակի հասնելու համար:

ՀՀ-ում աղքատության մակարդակը (ըստ սպառման) 2015 թ. կազմել է 29.8%, իսկ ծայրահեղ աղքատությանը՝ 2.0%: Մինչև 2008 թ. Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճին զուգահեռ արձանագրվեց աղքատության մակարդակի կրճատում: Սակայն 2008-ին սկիզբ առած ճգնաժամի հետևանքով այն նորից աճեց, և նվազումն արձանագրվեց 2010 թ. հետո (գծապատկեր 5): Նշենք, որ 2016 թ. ՀՀ ԱՎԾ-ն հրապարակեց նաև բազմաչափ աղքատության մակարդակի ցուցանիշը, որն ամփոփում է մի շարք զրկանքների (վերջինն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է «deprivation» տերմինով) մասով առկա տեղեկատվությունը և նկարագրում աղքատության բազմակողմությունը: Ըստ հրապարակման՝ այն կրճատվել է 2010–2015 թթ. ընթացքում՝ 41.2%-ից հասնելով 29.1%-ի¹⁹:



Գծապատկեր 5. Աղքատության, ծայրահեղ աղքատության մակարդակների և տնտեսական աճի շարժընթացը Հայաստանում 2004–2015 թթ. (%)²⁰

Գծապատկեր 5-ից երևում է, որ ծայրահեղ աղքատության մակարդակը կայուն կերպով կրճատվել է 2004–2008 թթ. ընթացքում: Սակայն 2009 թ. այն նորից աճել է և սկսել է նվազել 2011 թ. հետո: ՀՀ-ում դեռևս չի հաջողվել հաղթահարել աղքատության այս տեսակը: Աղքատության կրճատման տեսանկյունից՝ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը և աշխատատեղերով ապահովումն ունեն առաջնային նշանակություն:

¹⁹ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2016 թ., էջ 67:

²⁰ Տես նույն տեղը, էջ 41:

Հայաստանում առկա է նաև աշխատողների աղքատությունը²¹: ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը 2015 թ. կազմել է 55,000 դրամ, իսկ աղքատության վերին գիծը՝ 41,698 ՀՀ դրամ²²: Սակայն, օրինակ՝ բազմազավակ ընտանիքը, որտեղ ծնողներն աշխատում են նվազագույն աշխատավարձով, կարող է հայտնվել ծանր կացության մեջ (նույնիսկ պետության կողմից ընտանեկան նպաստի տրամադրման դեպքում): Խնդրի լուծմանը կնպաստի նվազագույն աշխատավարձի բարձրացումը: Կարևոր է նաև աղքատության շեմի վերանայումը. սա հնարավորություն կտա բացահայտելու աղքատության իրական մակարդակը: Նշենք, որ հավաստի և ամբողջական վիճակագրության հասանելիությունը կարևոր է տարբեր խնդիրների լուծման տեսանկյունից²³:

2008 թ. համեմատությամբ բարձր է նաև մանկական աղքատության ցուցանիշը. 2015 թ. կազմել է 33.7%: Ծայրահեղ աղքատության պայմաններում է ապրում երեխաների 2.5%-ը, որը գերազանցում է 2008 թ. մակարդակը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մանկական աղքատության ցուցանիշների շարժընթացը 2008–2015 թթ. (%)²⁴

Տարեթիվ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ոչ աղքատ
2008	1.6	29.8	70.2
2009	3.8	35.7	64.3
2010	3.7	41.4	58.6
2011	4.7	41.9	58.1
2012	3.3	36.2	63.8
2013	3.3	37.3	62.7
2014	3.3	34.0	66.0
2015	2.5	33.7	66.3

Աղքատության պայմաններում բնակվող երեխաների շրջանում նվազում է կրթություն ստանալու և որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունը: Սրա հետևանքները պահպանում են իրենց ազդեցությունը տարիների ընթացքում: Կարևոր է նաև տարեց բնակչության շրջանում աղքատության հաղթահարումը: Նշանակված կենսաթոշակի միջին չափը 2015 թ. կազմել է 40,441 ՀՀ դրամ²⁵. Կարծում ենք՝ սա (եկամտի այլ աղբյուրների կամ խնայողության բացակայության դեպքում) չի կարող բավարարել կենսաթոշակային տարիքում գտնվող անձի հիմնական կարիքները: Աղքատության շեմը, նվազագույն աշխատավարձը, նպաստները, կենսաթոշակները սահմանելիս որպես ուղեցույց կարող է ծառայել հիմնական կարիքների ընդգրկումն հետազոտությունը: Հիմնական կարիքների շարքն են դասվում պահանջը սննդի, հագուստի, բնակարանային անհրաժեշտ պայմանների, կրթության, առողջապահական ծառայությունների նկատմամբ: Այստեղ հարկավոր է հաշվի առնել նաև բնակչության կարողությունների և հնա-

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 56:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 38:

²³ **Dowell S.**, How Data Can Save Children’s Lives, available at: <https://www.project-syndicate.org/commentary/new-autopsy-program-can-help-save-children-by-scott-dowell-2016-03>

²⁴ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2016, էջ 87:

²⁵ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին, էջ 419:

րավորությունների զարգացման ուղիները (վերջինն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է «Capability approach» անվամբ):

Աղքատության խնդիրը կապված է նաև տարածքային անհամաչափ զարգացման հետ: ՀՀ աղքատության ամենաբարձր մակարդակն ինչպես 2008 թ., այնպես էլ 2015-ին արձանագրվել է Շիրակում, Կոտայքում, Լոռիում (աղյուսակ 2): Հարկ է նշել, որ այս մարզերն աղքատների թվով ևս անհամեմատ բարձր դիրք են զբաղեցնում²⁶:

Աղքատության մակարդակը 2015 թ., 2008 թ. համեմատությամբ, աճել է Երևանում, Արմավիրում, Լոռիում, Շիրակում, Սյունիքում և Տավուշում: Նշենք, որ Շիրակի բնակչության գրեթե կեսը բնակվում է աղքատության տիրույթում: Ծայրահեղ աղքատությունն առկա է բոլոր մարզերում:

Աղքատության հարցերը քննարկելիս տեղին է անդրադառնալ նաև բնակարանային անապահովության խնդրին: ՀՀ-ում քիչ չեն բնակարան չունեցողները: Խոսքը վերաբերում է հատկապես Գյումրի քաղաքի այն բնակիչներին, ովքեր շարունակում են ապրել ժամանակավոր կացարաններում: Սոցիալական բնակարանաշինությունը կարող է կրճատել բնակարանային խնդիրները ՀՀ-ում: Դա կարող է իրականացվել ինչպես պետության, այնպես էլ մասնավոր հատվածի կողմից:

Աղյուսակ 2

Աղքատության հիմնական ցուցանիշները մարզերում և Երևանում, 2008 թ. և 2015 թ.²⁷

ՀՀ մարզեր և ք. Երևան	2008 թ.		2015 թ.	
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
Երևան	1.1	20.1	2.0	25.0
Արագածոտն	0.5	20.3	0.4	16.1
Արարատ	1.6	31.3	1.3	27.3
Արմավիր	0.7	24.5	2.1	29.6
Գեղարքունիք	0.4	32	1.3	32.1
Լոռի	2.8	34.2	2.8	36.2
Կոտայք	2.1	39.5	2.3	35.9
Շիրակ	4.6	42.4	3.9	45.3
Սյունիք	1.3	20.3	0.7	24.5
Վայոց ձոր	1.9	21.1	1.0	16.9
Տավուշ	1.7	23.2	2.0	35.3
Ընդամենը	1.6	27.6	2.0	29.8

Աղքատությունը հաճախ դիտարկվում է որպես միայն եկամտի անբավարարության հետևանք: Այսինքն՝ ուսումնասիրության առարկա է դառնում միայն եկամտային աղքատությունը: Այնինչ, աղքատության պատճառները չեն սահմանափակվում միայն եկամտի ցածր մակարդակով: Բացի այդ, եկամտի՝ կարողությունների փոխակերպումը կախված է մի շարք հանգամանքներից: Ուստի աղքատությունը գնահատելու համար եկամտից բացի ուսումնասիրվում են ծննդյան պահին կյանքի սպասվելիք տևողությունը, թերսնուցումը, կրթվածության, մանկամահացության մակարդակները և այլն²⁸: Դրանք ընդգրկում ծնով բնութագրում են կյանքի որակը:

²⁶ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 թ., էջ 297, 288, 279:

²⁷ Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2016 թ., էջ 44:


²⁸ Տե՛ս **Sen A.**, Development as freedom, Oxford university press, 1999, see particularly chapter 4:

Կրթության և աշխատանքի կարևորությունը մարդկային զարգացման համատեքստում

Մարդկային, հետևաբար և տնտեսական զարգացման համար չափազանց մեծ է կրթության դերը: Որպեսզի հնարավոր լինի ապահովել կայուն զարգացում, անհրաժեշտ է նպաստել կրթության հասանելիության մակարդակի բարձրացմանը: Այս տեսանկյունից կարևոր է ոչ միայն հասանելիության ապահովումը, այլև կրթության որակի բարելավումը:

Ջարգացման ցածր մակարդակ ունեցող մեծ թվով երկրներից շատերում բարձրագույն կրթություն ստանալու խոչընդոտներից է տարրական և միջնակարգ կրթության ոչ բավարար հասանելիությունը: Աղքատությունը ՀՀ-ում երեխաների՝ դպրոց չհաճախելու պատճառներից է: Ցածր է նաև որակյալ բարձրագույն կրթություն ստանալու հասանելիությունը. ՀՀ-ում բարձրագույն կրթության վարձավճարները համեմատաբար ցածր են, սակայն ցածր է նաև բնակչության վճարունակությունը:

Տնտեսական աճը ենթադրում է հարկային եկամուտների ավելացում, հետևաբար՝ պետական ծախսերի մեծացման հնարավորություն: ՀՀ պետական բյուջեից կրթության ֆինանսավորումը կայուն բնույթ չի կրել, և դրա կշիռը ՀՆԱ-ում կրճատվել է 2009–2013 թթ. ընթացքում: Ոլորտի ֆինանսավորումը բացարձակ արժեքով աճել է վերջին երկու տարում (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Պետական բյուջեից կրթության ֆինանսավորումը և դրա կշիռը ՀՆԱ-ում 2007–2015 թթ. (%)²⁹

Աշխատանքը հնարավորություն է տալիս իրացնելու կրթական կապիտալը: Մարդկային զարգացմանը նվիրված վերջին հրապարակման մեջ ընդ-

Corvalan J., Poverty Beyond the Numbers, available at: <https://www.project-syndicate.org/commentary/world-bank-poverty-definition-by-julia-corvalan-2016-04>

²⁹ Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ (<http://mfe.am/index.php?cat=10&lang=1>) և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=263>): Ազգային հաշիվների համակարգ 2003 ստանդարտի 2015 թ. և 2008 ստանդարտի 2007–2011 թթ. ՀՆԱ-ները հաշվարկել ենք՝ կիրառելով հրապարակված անվանական ՀՆԱ աճի տեմպերը, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն դրանք չի հրապարակել:

գծվում է աշխատանքի կարևորությունը³⁰: Գործազրկության խնդիրը սրվել է ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներում: Պարտքային ճգնաժամից հետո եվրոպական մի շարք երկրներում տնտեսության վերականգնումը չի ուղեկցվում զբաղվածության խնդիրների լուծմամբ (արտասահմանյան գրականության մեջ այս երևույթը հայտնի է «Jobless recovery» անվամբ): Երկարատև գործազրկության հետևանքով քայքայվում է մարդկային կապիտալի պաշարը, քանի որ տևական ժամանակով գործազուրկ դարձած մասնագետները կորցնում են իրենց մասնագիտական ունակությունների զգալի մասը: Գործազրկության բարձր մակարդակը ձևավորում է նաև անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Գործազրկության ոչ ցանկալի տեսակներից է գործազրկությունը հատկապես երիտասարդության շրջանում, քանի որ այն երկար ժամանակ պահպանում է իր հետևանքները:

Հայաստանում 2010-2013 թթ. գործազրկության մակարդակը տնտեսական աճին զուգահեռ կրճատվել է՝ 19%-ից հասնելով 16.2%-ի: Սակայն, միևնույն ժամանակ, կրճատվել է զբաղվածների թիվը: Սա կարող է վկայել այն մասին, որ գործազրկության մակարդակի կրճատումը պայմանավորված էր նաև գործազուրկների արտագաղթով: Դա նորից աճել է 2013-2015 թթ.՝ 16.2%-ից հասնելով 18.5%-ի³¹:

Զբաղվածության աճին կնպաստի փոքր և միջին գործարարության զարգացումը: Ձեռներեցությանը Հայաստանում խոչընդոտում են ինստիտուցիոնալ խնդիրները, մենաշնորհային շուկաները, վարկերի բարձր տոկոսադրույքները և այլն: Կարծում ենք՝ կարելի է դիտարկել նաև սոցիալական գործարարության (social business) իրականացման հնարավորությունը: Սոցիալական գործարարության նպատակը ոչ թե առավելագույն շահույթն է, այլ սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծումը: Ընկերությունը կարող է շահույթ ստանալ, սակայն դա նորից ներդրվում է: Ներդրողները ժամանակի ընթացքում վերադարձնում են միայն իրենց սկզբնական ներդրումները³²:

Սոցիալական գործարարության զարգացումը ՀՀ-ում կարող է մեծացնել ներդրումների ծավալներն ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա աղբյուրներից: Կարծում ենք՝ սա կնպաստի նաև սփյուռքից դեպի Հայաստան եկող կապիտալի հոսքի ավելացմանը: Դա բացատրվում է նրանով, որ հնարավոր է՝ լինեն սփյուռքահայեր, որոնք կցանկանան ներդրումներ կատարել հայրենիքում՝ ակնկալելով միայն մայր գումարի վերադարձը: Նշված եղանակով կստեղծվեն նոր աշխատատեղեր: Բացի այդ, կծեղվեն պայմաններ սոցիալական այլ խնդիրների լուծման համար:

Ասվածն իրագործելու համար կարևոր է համապատասխան օրենսդրության և վերահսկողության մեխանիզմների մշակումը: Ծրագրի իրականացմանը կարող են խոչընդոտել մենաշնորհային շուկաները, քաղաքական իշխանության՝ փոքրաթիվ մարդկանց ձեռքում գտնվելը և այլն: Նշվածները տարբեր չափաբաժիններով առկա են նաև մեր երկրում:

³⁰ Տե՛ս UNDP, Human development report 2015, Work for human development, Copyright, 2015:

³¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-1-2015.px/table/tableViewLayout2/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a)

³² Տե՛ս Yunnus M., Creating World Without Poverty, Social Business and the Future of Capitalism, PublicAffairs, New York, էջ 21-40:

Այս հիմնախնդիրներն առնչվում են ոչ միայն տնտեսական աճի արդյունքների բաշխմանը, այլև այն բանին, թե ինչպես են ստեղծվում դրանք, ինչպիսին է ՀՆԱ կառուցվածքը, ինչպիսին են տնտեսական աճի սոցիալական հետևանքները, ինչպիսին է ազդեցությունը բնակչության առողջության վրա և այլն:

Տնտեսական աճը և կյանքի սպասվող տևողությունը

Կյանքի սպասվող տևողությունը կյանքի որակի գնահատման կարևորագույն ցուցանիշներից է: Ս. Անանդի և Մ. Ռավալլոնի հետազոտությունները վկայում են, որ կյանքի սպասվող տևողությունն ավելանում է այն դեպքում, երբ տնտեսական աճն ուղեկցվում է սոցիալական ծառայությունների (օրինակ՝ առողջապահական) ընդլայնմամբ և հատկապես աղքատ բնակչության եկամուտների ավելացմամբ³³: Այսինքն՝ այստեղ կարևորվում է ոչ միայն տնտեսական աճը, այլև դրա պտուղների օգտագործման ուղղությունը: Միայն տնտեսական աճի առկայությունը դեռևս չի երաշխավորում կյանքի որակի բարելավում: Ա. Սենը և Ջ. Դրեզեն առանձնացնում են մահացության մակարդակի կրճատման երկու տարբերակ.

1. բարձր տնտեսական աճի միջոցով, որն ուղեկցվում է առողջապահական ծառայությունների և կրթության հասանելիության աստիճանի բարձրացմամբ,
2. ի տարբերություն առաջին տարբերակի՝ սա չի գործում բարձր տնտեսական աճի միջոցով, այլ հիմնվում է սոցիալական օգնության ընդգրկումն ծրագրի վրա³⁴:

Ցանկալին այն իրավիճակն է, երբ արձանագրվում է և՛ տնտեսական աճ, և՛ կյանքի սպասվող տևողության ավելացում³⁵: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ ծննդյան պահից կյանքի սպասվող տևողությունն ամբողջ բնակչության համար աստիճանաբար աճում է³⁶: ՀՀ-ի՝ լուծում պահանջող գլխավոր խնդիրներից է որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովումը: Վերջինի հաղթահարման առումով, պետության առավել ակտիվ միջամտության կարիք է զգացվում: Հետազոտությունները վկայում են, որ առողջապահության ոլորտի ֆինանսավորումից ստացվող օգուտները բազմաթիվ անգամ գերազանցում են սկզբնական ծախսերը³⁷: Պետական բյուջեից առողջապահության ոլորտի ֆինանսավորումը բացարձակ արժեքով աստիճանաբար աճել է: Սակայն այստեղ ևս 2009–2013 թթ. ընթացքում նկատվել է ՀՆԱ-ում այդ ծախսերի կշռի կրճատում (գծապատկեր 7):

³³ Տե՛ս **Anand S., Ravallion M.**, Human Development In Poor Countries On The Role of Private Incomes and Public Services, Journal of Economics Perspectives 7 (1993):


³⁴ Տե՛ս **Dréze J., Sen A.**, Hunger and Public Action, Oxford Clarendon press, 1989, see particularly chapter 10:

³⁵ Տե՛ս **Sen A.**, Development as Freedom, Oxford university press, 1999, էջ 48:

³⁶ Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_28%20Population/PS-pp-1-2013-2014.px/table/tableViewLayout2/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a)

³⁷ Տե՛ս **Arrow K., Sanghi A.**, Why Economists Put Health First, available at: <https://www.project-syndicate.org/commentary/developing-countries-universal-health-systems-by-kenneth-j--arrow-and-apurva-sanghi-2015-12>:

Sachs J., Financing Health and Education for All, available at: <https://www.project-syndicate.org/commentary/financing-universal-health-education-by-jeffrey-d-sachs-2016-05>:



Գծապատկեր 7. Պետական բյուջեից առողջապահության ոլորտի ֆինանսավորումը և դրա կշիռը ՀՆԱ-ում 2007–2015 թթ. (%)³⁸

Առողջական կապիտալի զարգացման տեսանկյունից կարևոր է նաև ֆինանսավորման աճի տեմպի բարձրացումը: Առաջնահերթություն է նաև պետական ծախսերի արդյունավետության մակարդակի բարձրացումը, քանի որ սա հնարավորություն կտա խնայելու միջոցներ վերոնշյալ ֆինանսավորումն իրականացնելու համար:

Այսպիսով՝ զարգացման գործընթացում տնտեսական և սոցիալական ոլորտների միջև կապը երկկողմանի է: Տնտեսական զարգացումն արժևորվում է նրանով, թե ինչ ազդեցություն է թողնում անհատի և հասարակության կյանքում, ինչպես է նպաստում կյանքի որակի բարելավմանը և բարեկեցության աճին: Սոցիալական առաջընթացն իր հերթին կարևոր է տնտեսական խնդիրների լուծման առումով:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011 թ., 2016 թ.:
2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2008–2016 թթ.:
3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016 թ.:
4. ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ (<http://mfe.am/index.php?cat=10&lang=1>) և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=263>):
5. Աղաջանյան Հ., Տնտեսական աճի որակի հարցի շուրջ: «Բանբեր ՀՊՏՀ», 2013 թ., N 4:
6. Acemoglu D., Robinson J., Why Nations Fail, The Origins of Power, Prosperity, and Poverty, Crown Business, New York.

³⁸ Աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ (<http://mfe.am/index.php?cat=10&lang=1>) և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=263>): ՀՀ 2003 ստանդարտի 2015 թ. և 2008 ստանդարտի 2007–2011 թթ. ՀՆԱ-ները հաշվարկել ենք՝ կիրառելով հրապարակված անվանական ՀՆԱ աճի տեմպերը, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն դրանք չի հրապարակել:

7. Anand S., Ravallion M., Human Development In Poor Countries On The Role of Private Incomes and Public Services, *Journal of Economics Perspectives*, 1993 (7).
8. Arrow K., Sanghi A., Why Economists Put Health First, available at: <https://www.project-syndicate.org/commentary/developing-countries-universal-health-systems-by-kenneth-j-arrow-and-apurva-sanghi-2015-12>
9. Corvalan J., Poverty Beyond the Numbers, available at: <https://www.project-syndicate.org/commentary/world-bank-poverty-definition-by-julia-corvalan-2016-04>
10. Deaton A., Prize Lecture: Measuring and Understanding Behavior, Welfare, and Poverty, available at: http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.html
11. Deaton A., *The Great Escape: Health, Wealth, and the Origins of Inequality*, Princeton University Press, 2013.
12. Dowell S., How Data Can Save Children's Lives, available at: <https://www.project-syndicate.org/commentary/new-autopsy-program-can-help-save-children-by-scott-dowell-2016-03>
13. Dréze J., Sen A., *Hunger and Public Action*, Oxford Clarendon press, 1989.
14. Encyclical Letter *Laudato Si* of The Holy Father Francis On Care For Our Common Home, available at: http://w2.vatican.va/content/francesco/en/encyclicals/documents/papa-francesco_20150524_enciclica-laudato-si.html
15. Ianchovichina E., Lundstrom S., with input from Garrido L., What is inclusive growth?, February 2009, 10.
16. Myrdal G., Prize lecture: The Equality Issue In World Development, available at: http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html
17. Myrdal G., *Asian Drama: An Inquiry Into the Poverty of Nations*, Twentieth Century Fund, New York, 1968.
18. Ranis G., *Human Development and Economic Growth*, Economic Growth Center, Center Discussion paper No 87, Yale university, May 2004, available at: <http://ssrn.com/abstract=551662>
19. Sen A., *Development as Freedom*, Oxford University Press, 1999.
20. Stiglitz J., *The Price of Inequality*. Allen Lane an imprint of Penguin Books, էջ 182–187.
21. Stiglitz J., When Inequality Kills, available at: <http://www.project-syndicate.org/commentary/lower-life-expectancy-white-americans-by-joseph-e-stiglitz-2015-12?barrier=true>
22. Stiglitz J., Causes and consequences of growing inequality and what can be done about it, The fourth annual Oxford Fulbright distinguished lecture on international relations, available at <https://www.youtube.com/watch?v=TbvF05EXEVk#t=1329>
23. Sachs J., Financing Health and Education for All, available at: <https://www.project-syndicate.org/commentary/financing-universal-health-education-by-jeffrey-d-sachs-2016-05>
24. UNDP, *Human Development Reports, Inequality-adjusted Human Development Index*, available at: <http://hdr.undp.org/en/composite/HDI>
25. UNDP, *Human development report 2015, Work for human development*, Copyright, 2015.
26. Yunnus M. *Creating World Without Poverty, Social Business and the Future of Capitalism*, PublicAffairs, New York.

САМВЕЛ МАРГАРЯН

*Экономист Управления макроэкономической политики
Министерства финансов РА,
аспирант кафедры Экономической теории АГЭУ*

Проблемы взаимовлияния экономического и социального развития. – В статье были обсуждены проблемы взаимовлияния экономического и социального развития. Отмечены современные подходы для их решения. Проанализирована взаимосвязь между экономическим ростом и социальными показателями. Автор исходит из того, что экономический рост способствует социально-экономическому развитию, если сопровождается созданием рабочих мест, сокращением неравенства, преодолением бедности, улучшением уровня жизни и т.д.

Ключевые слова: *экономическое развитие, человеческое развитие, экономический рост, бедность, неравенство, ожидаемая продолжительность жизни.*

JEL: A19, O10, O49, P27, P29

SAMVEL MARGARYAN

*Economist at Macroeconomic Policy Department
of the Ministry of Finance of the RA,
Post-graduate at the Chair of
Theory of Economics at ASUE*

The Interaction Issues of Economic and Social Development. – The article analyzes the interaction issues of economic and social development and the modern ways to solve them. The relationship between economic growth and social indicators is analyzed. The author supports the theory, that economic growth fosters socio-economic development when followed by job creation, reduction in inequality, elimination of poverty, improvements in living standards, etc.

Key words: *economic development, human development, economic growth, poverty, inequality, life expectancy.*

JEL: A19, O10, O49, P27, P29